ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 15 օգոստոսի 2025թ.

Ժամը 11:00-ին

2025 թվականի օգոստոսի 15-ին Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում կայացավ Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 114-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հանրային քննարկում:

Ելույթներ.

Մ. Զաքարյան – Բացման խոսքով հանդես եկավ տնտեսական ծրագրերի պատասխանատու Մարիամ Զաքարյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի «Վաղարշապատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչներ սահմանելու մասին» թիվ 24 որոշմամբ ընդունված կարգով, նպատակ ունենալով մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ հաճախող ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց երեխաների համար զեղչի արտոնություն սահմանելու, արտոնություններ կիրառելու, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու վերաբերյալ 2025թ. օգոստոսի 15-ին Վաղարշապատի համայնքապետարանի նիստերի դահլիճում անցկացվում է

հանրային քննարկում: Առավել մանրամասն կզեկուցի կրթության և մշակույթի բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մանուկյանը:

Ա. Մանուկյան – Աշխարուհի Մանուկյանը ներկայացրեց, որ Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» թիվ 114-Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ լրացումները և փոփոխությունները: 4 և ավելի երեխա ունեցող բազմազավակ ընտանիքի երեխաների համար զեղչի արտոնություն սահմանվում է 50%-ի չափով, նույն ընտանիքից միևնույն ժամանակ մանկապարտեզ այցելող 3-րդ երեխայի համար՝ 50%-ի չափով, իսկ նույն ընտանիքից միևնույն ժամանակ մանկապարտեզ այցելող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 100%-ի չափով:

Այնուհետև նշեց՝ ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց երեխաների համար՝ սահմանված տեղական վճարի գծով սահմանել զեղչի արտոնություն 100%-ի չափով, իսկ ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց երեխաների համար՝ սահմանված տեղական վճարի գծով 50%-ի չափով:

Հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Որոշում.

Ամփոփելով հանրային քննարկումը՝ որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Քննարկման վարող և պատասխանատու **Մ. Զաքարյան**

Ձեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: